ԱՐՑԱԽԻ ՀԱՅ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ

Շահնազարյան Ա. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

Բանալի բառեր՝ պատմահենություն, Արցախ, Ուտիք, Աղվանք, իշխանական տներ, էթնոս:

Ադրբեջանական պատմահենությունը՝ ի դեմս Զ. Յամպոլսկու, Զ. Բունիաթովի, Յու. Գեյուշևի, Ռ. Հուսեյնովի, Ֆ. Մամեդովայի, Ռ. Մեհտիևի և այլոց, ի սկզբանե շրջանառության մեջ է դրվել, իսկ մեր օրերում պատմաշինարարության թյուրքական մեթոդներով պատմական իրականության անօրինակ կեղծմամբ համառորեն զարգացնում է միմյանց հետ սերտորեն կապված հակագիտական երկու տեսակետներ: Դրանցից մեկի համաձայն՝ Հայոց Արևելից կամ Աղվանից կողմերը հանդիսացող Ուտիքն ու Արցախը ոչ թե Մեծ Հայքի նահանգներ են, այլ, ի բնե Բուն Աղվանքի մաս կազմելով, բնակեցված են եղել աղվաններով: Ըստ երկրորդի՝ ոչ վաղ անցյալում կովկասյան թաթարներ անվամբ հայտնի, այժմ ադրբեջանցի վերանվանվածները ոչ թե եկվոր թյուրքերի, այլ՝ աղվանների օրինական ժառանգներ են:

Այս պատմաշինարարության արդյունքում արցախյան իշխանատոհմերի էթնիկ պատկանելությունը նենգափոխվում է, և նրանք հռչակվում են աղվաններ, այսինքն՝ ադրբեջանցիներ: Այս մտավարժանքով փորձ է արվում §հիմնավորել¦ Արցախի նկատմամբ ադրբեջանական նկրտումները: Իրականում բուն Աղվանքը ընդգրկել է ոչ միայն Կուրի ձախափնյակում, այլև այն բնակեցնող ցեղերը, նախքան այժմյան ադրբեջանցիների նախնի թյուրք-օղուզների՝ XII դ. մեր տարածաշրջանում հայտնվելը, էթնիկ ու դավանական ձուլման ենթարկվելով իբրև էթնիկ հանրություն, գոյություն չունեին:

Հակառակ պատմության՝ ադրբեջանական կեղծարարների կեղծ պնդումների՝ արցախյան իշխանատոհմերը հայկազուն էին: Դա են վկայում ինչպես հայկական վիմագիր ու գրավոր, այնպես էլ՝ չեզոք, օտար սկզբնաղբյուրներում պահպանված բազմաթիվ անհերքելի տեղեկություններ, որոնք ադրբեջանական պատմահենները կամ անտեսում են, կամ էլ խեղաթյուրում:

ON THE AZERBAIJANIAN FALSIFICATION OF THE ETHNIC ORIGIN OF ARTSAKH'S ARMENIAN PRINCELY FAMILIES

Shahnazaryan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of History, Armenia)